ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հունիսի 2025 թվականի N 71-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ ԳԵՏԱՓՆՅԱ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 6/29 ՀԱՍՑԵԻ 0,00015 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՐԱՆՏ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 63–րդ հոդվածի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի բ/ ենթակետով, հիմք ընդունելով Հրանտ Կարապետյանի 2025 թվականի հունիսի 13-ի դիմում-խնդրանքը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Գորիս համայնքի Գորիս քաղաքի Գետափնյա թաղամասի թիվ 6/28/1 հասցեում Հրանտ Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող հողատարածքի ընդլայնման համար, հողամասին կից գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող 0,00015հա (կադաստրային ծածկ. 09-003-0072-0052) բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը, որը հնարավոր չէ որպես առանձին գույքային միավոր օտարել հրապարակային սակարկության միջոցով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Հրանտ Կարապետյանին 6700 (վեց հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով:
2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌՈՒՇԱՆՅԱՆ ԱՌՈՒՇ
ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ
ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏ

ԻՎԱՆՅԱՆ ՀԱՅԿ
ԼԱՋԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՄԱՐԻՆԵ
ՄԿՐՏՉՅԱՆ ՍՈՆԱ
ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՀՐԱՄ
ՍՈՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՏՈՌՈՋՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ**

2025թ. հունիսի 23
ք. Գորիս